



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2006թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 29653 գործարքներ, որոնց քանակը 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 20.3%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 5.5%-ով:

2006թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2006թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12813 օտարման գործարքների 88.1% կազմել են առուվաճառքները, 11.2%՝ նվիրատվությունները և 0.7%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների քանակի 38.7% արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 39.9%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2006թ. երրորդ եռամսյակում, 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.1%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 2.6%-ով: 2006թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 4174 առուվաճառքի գործարքների 66.7% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 18.4%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 6.0%-ով:

2006թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երրորդ եռամսյակ 2005թ.	երրորդ եռամսյակ 2006թ.	երկրորդ եռամսյակ 2006թ.
Կենտրոն	158500-900000	298200	384200	364200
Արաբկիր	113200-771000	243700	304400	288900
Քանաքեռ-Զեյթուն	90600-362900	149300	185800	174500
Նոր-Նորք	90600-327800	145000	173100	162800
Ավան	81500-226300	127700	160100	144700
Էրեբունի	72400-293400	127700	153800	143100
Շենգավիթ	72400-399400	152700	185900	173300
Դավթաշեն	90600-282100	154000	193100	178400
Աջափնյակ	90600-451100	146500	172900	163000
Մալաթիա-Սեբաստիա	90600-271900	140700	169800	160300
Նուբարաշեն	54300-137500	77900	110900	106100
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	54300-900000	160300	199500	187200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են 6.6%, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 24.5%:

2006թ. երրորդ եռամսյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն նվազման միտում:

2006թ. երրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1498 բնակարաններ, որոնց քանակը 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 14.6%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 12.3%-ով:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում

առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			երրորդ եռամսյակ 2005թ.	երրորդ եռամսյակ 2006թ.	երկրորդ եռամսյակ 2006թ.
Արագածոտն	Աշտարակ	60300 - 95000	48100	67600	59400
	Ապարան	18000 - 28000	21500	26100	25600
	Թալին	13600 - 34800	21100	25700	23000
Արարատ	Արտաշատ	39100 - 137780	36300	53700	44900
	Մասիս	36000 - 96100	48300	61500	53500
	Վեդի	22600 - 65300	30800	42600	37000
	Արարատ	19300 - 75100	34400	42500	39200
Արմավիր	Վաղարշապատ	71000 - 159100	71600	89000	77900
	Արմավիր	38700 - 125200	42500	60300	51300
	Մեծամոր	33000 - 67600	23200	39200	33300
Գեղարքունիք	Սևան	28300 - 88200	28600	38800	32500
	Գավառ	20400 - 30000	20400	26300	24600
	Մարտունի	22500 - 67500	34100	38800	38300
	Վարդենիս	13500 - 30000	18000	21000	19800
	Ճամբարակ	5900 - 31100	9800	13200	13100
Լոռի	Վանաձոր	27000 - 115200	38500	53500	46700
	Ստեփանավան	15000 - 31700	21500	25200	24100
	Սյիտակ	30300 - 57300	24600	37700	32700
	Ալավերդի	9600 - 25000	17300	20900	20100
	Տաշիր	11300 - 33300	19400	20000	19900
	Թումանյան	4100 - 11300	5200	5300	5200
	Շամլուղ	2300 - 8300	2800	2900	2800
	Ախթալա	6800 - 16000	10400	10600	10300
Կոտայք	Աբովյան	55000 - 184700	74500	101900	88500
	Նոր Հաճն	53100 - 101000	53900	68600	59600
	Բյուրեղավան	22700 - 79800	33700	48800	42000
	Եղվարդ	50200 - 88200	45100	64100	55000
	Հրազդան	20900 - 73400	27500	38700	34400
	Ծաղկաձոր	68000 - 88800	53600	74300	70800
	Զարենցավան	26300 - 78400	33900	44200	38600
Շիրակ	Գյումրի	25100 - 127100	40500	51300	46600
	Արթիկ	19600 - 61500	24300	32100	29600
	Մարաիկ	8400 - 30000	21000	21700	21700
Սյունիք	Գորիս	26800 - 79300	42200	52500	51100
	Կապան	29000 - 91400	30500	46100	38900
	Սիսիան	26700 - 62700	25500	39000	32200
	Մեղրի	20000 - 43300	20600	30800	26100
	Ագարակ	9000 - 31100	17300	20200	19300
	Քաջարան	20200 - 45600	16500	27100	23800
	Դաստակերտ	4500 - 11300	6400	6600	6400
Վայոց Ձոր	Վայք	39500 - 52200	27500	39200	33500
	Եղեգնաձոր	33800 - 117000	39800	60000	51800
	Զերմուկ	43600 - 189200	43200	67400	59100
Տավուշ	Դիլիջան	28100 - 95800	31400	48100	40800
	Իջևան	40600 - 99900	35800	57700	48700

	Բերդ	22100 - 70600	25000	30300	29400
	Նոյեմբերյան	8500 - 25000	14000	20600	15800
	Այրում	12000 - 22000	10000	18000	10000

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի շուկայական միջին գները 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 13.0%, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 35.8%:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի ամսական փոփոխման շարժերն ունեն կայունացման միտում:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1356 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 340, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1016: 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 3.2%-ով, ընդ որում Երևան քաղաքում նվազել է 6.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել 6.7%-ով: 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 3.6%-ով, ընդ որում Երևանում՝ 5.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 2.8%-ով:

2006թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
		երրորդ եռամսյակ 2005թ.	երրորդ եռամսյակ 2006թ.	երկրորդ եռամսյակ 2006թ.
Կենտրոն	135000-900200	323900	391300	380300
Արաբկիր	90000-450100	260200	307100	293700
Քանաքեռ-Զեյթուն	67500-270100	155700	188300	177600
Նորք-Մարաշ	90000-450100	180000	188300	184800
Ավան	90000-360100	134500	161400	147400
Էրեբունի	67500-225100	132400	156100	146100
Շենգավիթ	67500-202500	155100	187100	175600
Դավթաշեն	90000-405100	159500	194900	181000
Աջափնյակ	67500-270100	154100	175200	165300
Մալաթիա-Սեբաստիա	67500-405100	145100	172200	163200
Նուբարաշեն	40500-155000	85300	113000	107800
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	40500-900200	171500	203200	193000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2006թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 5.3%, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 18.5%:

2006թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի փոփոխման շարժերն ունեն աճի միտում:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Նվազագույն և առավելագույն գները 2006թ. երրորդ եռամսյակում /դրամ/	Միջին գները /դրամ/		
			2005թ. երրորդ եռամսյակ	2006թ. երրորդ եռամսյակ	2006թ. երկրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	29100-98000	49400	69900	63600
	Ապարան	13500-36000	23100	27800	27100
	Թալին	13600-36000	22800	26700	24300
Արարատ	Արտաշատ	22500-141000	37600	54800	46200
	Մասիս	25000-98000	49700	62800	54600
	Վեդի	22500-67500	32000	43700	38300
	Արարատ	22500-76800	35500	43600	40400
Արմավիր	Վաղարշապատ	54100-164200	72800	90300	79300
	Արմավիր	22500-126000	44200	61400	52900
Գեղարքունիք	Սևան	18000-90600	30700	41000	38200
	Գավառ	10000-37800	21600	27500	25900
	Մարտունի	22200-68000	35800	40100	39500
	Վարդենիս	11000-32500	20100	22400	21500
	Ճամբարակ	4500-32600	11000	14700	14500
Լոռի	Վանաձոր	23200-116800	39700	54700	48000
	Ստեփանավան	13500-40200	26800	27200	26800
	Մալիտակ	20000-58600	25900	38600	33900
	Ալավերդի	9000-31500	18300	22000	21600
	Տաշիր	9000-36500	20700	21400	21400
	Թումանյան	4500-18000	6600	6900	6900
	Շամլուղ	2300-13500	4100	4300	4300
	Ախթալա	9000-22500	11900	12100	11900
Կոտայք	Աբովյան	45500-191600	77100	103700	90000
	Նոր Հաճն	42500-105800	55500	69700	60600
	Բյուրեղավան	22200-81400	35300	49900	43200
	Եղվարդ	30200-90300	47700	65200	56100
	Հրազդան	18000-74000	29700	39900	35900
	Ծաղկաձոր	40000-112500	55700	76200	72200
	Չարենցավան	18000-79300	36400	45300	39500
Շիրակ	Գյումրի	28200-129000	43300	52600	48000
	Արթիկ	13300-62400	26400	33200	30800
	Մարալիկ	13500-40000	23100	23700	23500
Սյունիք	Գորիս	18000-79900	43400	54000	52200
	Կապան	22000-94000	32500	47300	40000
	Միսիան	20000-66400	27200	40000	33400
	Մեղրի	13500-44800	22400	31700	27300

	Ագարակ	13300-36000	19200	21300	20800
	Դաստակերտ	4500-18000	8300	8700	8700
Վայոց Ձոր	Վայք	26000-55600	29100	40200	34700
	Եղեգնաձոր	22200-118400	42100	61200	53100
	Ջերմուկ	26500-191600	29700	37700	35300
Տավուշ	Դիլիջան	26600-97500	33100	49300	41800
	Իջևան	22200-101100	37100	58800	49900
	Բերդ	20000-71200	26000	31300	30700
	Նոյեմբերյան	9000-31500	14400	21500	16900
	Այրում	5200-28000	11200	19200	19200

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 11.2 %, իսկ 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել են՝ 31.1%:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի փոփոխման շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 4665 միավոր /3310.55 հա/ հողեր, որից Երևանում՝ 472 միավոր /67.01 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 164 միավոր /37.34 հա/ հողեր, որից Երևանում՝ 113 միավոր /27.84 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1987 միավոր /3005.29 հա/, որից Երևանում՝ 12 միավոր /1.24 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1752 միավոր /164.09 հա/, որից Երևանում՝ 265 միավոր /22.23 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 834 միավոր /96.74 հա/, որից Երևանում՝ 171 միավոր /35.25 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 57 միավոր /20.41 հա/, որից Երևանում՝ 24 միավոր /8.29 հա/,
- հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 15 միավոր /15.61 հա/: Երևանում հատուկ պահպանվող տարածքի հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել,
- էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 20 միավոր /8.41 հա/: Երևանում էներգետիկայի օբյեկտների հողերի օտարման գործարքներ չեն գրանցվել:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 4414 միավորի /3135.08 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 444 միավոր /61.08 հա/, նվիրատվության գործարքներ՝ 213 միավոր /164.05 հա/, որից Երևանում՝ 25 միավոր /5.44 հա/ և փոխանակության գործարքներ՝ 38 միավոր /11.42 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.49 հա/:

Հանրապետությունում 2006թ. երրորդ եռամսյակում, 2005թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 45.8%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 29.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ աճել է 56.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 3.4 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ աճել է 2.3 անգամ և էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 20 գործարքով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1350.36

հա, որից 1327.79 հա գյուղատնտեսական նշանակության են: Վաճառված հողերի քանակի 39.3%-ը կամ 1735 գործարքներ /1636.88 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 162 գործարքներ /31.88 հա/, իսկ 60.64%-ը կամ 2677 միավորը /1475.97 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 282 միավոր /29.21 հա/: 2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 2 գործարք /22.23 հա/:

Ստորև ներկայացվում է 2006թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	24	8.29	35	2.44	103	21.14	12	1.24	0	0.00	210	18.40	60	9.56
Արագածոտն	118	206.50	2	0.65	51	6.15	53	3.85	156	129.30	1	0.20	140	14.06	11	0.88
Արարատ	91	155.18	8	1.05	108	10.85	57	2.40	223	110.95	3	0.17	200	18.60	5	2.18
Արմավիր	114	606.24	3	3.79	3	0.25	38	0.91	216	721.56	1	2.23	164	14.10	29	1.30
Գեղարքունիք	11	10.13	1	0.06	22	2.09	95	4.76	34	51.13	0	0.00	17	2.09	5	0.80
Լոռի	1	1.50	0	0.00	11	0.37	30	1.17	151	99.28	1	0.10	24	2.16	13	0.41
Կոտայք	185	399.61	5	1.28	74	6.89	116	19.50	306	112.86	0	0.00	447	46.78	17	5.20
Շիրակ	10	37.34	1	1.17	68	3.08	77	2.11	31	31.17	1	0.03	24	1.70	8	0.25
Սյունիք	1	2.00	1	0.03	5	0.50	30	1.08	39	40.35	0	0.00	9	0.72	6	0.23
Վայոց Ձոր	38	69.63	1	0.91	5	0.20	55	2.50	14	12.67	0	0.00	9	1.70	2	0.25
Տավուշ	37	5.33	3	0.35	11	0.88	9	11.28	61	17.49	1	0.12	16	1.31	0	0.00
Ընդամենը	606	1493.46	49	17.58	393	33.70	663	70.70	1243	1328.00	8	2.85	1260	121.62	156	21.06

Ստորև ներկայացվում է 2006թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ հատուկ պահպանվող տարածքների, էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	135	28.26	24	8.29	23	1.67	88	18.30	27	3.61	0	0.00	0	0.00	12	0.77	15	2.84
Արագածոտն	15	1.21	1	0.35	0	0.00	14	0.86	209	215.95	118	206.50	1	0.30	51	6.15	39	3.00
Արարատ	25	1.15	3	0.79	2	0.04	20	0.32	239	168.33	91	155.18	5	0.26	106	10.81	37	2.08
Արմավիր	16	3.17	2	2.88	1	0.05	13	0.24	142	608.02	114	606.24	1	0.91	2	0.20	25	0.67

Գեղարքունիք	4	0.42	1	0.06	0	0.00	3	0.36	125	16.62	11	10.13	0	0.00	22	2.09	92	4.40
Լոռի	8	0.38	0	0.00	3	0.03	5	0.35	34	2.66	1	1.50	0	0.00	8	0.34	25	0.82
Կոտայք	29	4.03	2	0.49	1	0.08	26	3.46	351	423.25	185	399.61	3	0.79	73	6.81	90	16.04
Շիրակ	14	0.37	0	0.00	2	0.12	12	0.25	142	43.32	10	37.34	1	1.17	66	2.96	65	1.85
Սյունիք	21	1.15	1	0.03	3	0.34	17	0.78	16	2.47	1	2.00	0	0.00	2	0.16	13	0.31
Վայոց Ձոր	13	0.89	0	0.00	0	0.00	13	0.89	86	72.35	38	69.63	1	0.91	5	0.20	42	1.61
Տավուշ	17	5.28	3	0.35	8	0.58	6	4.35	43	12.56	37	5.33	0	0.00	3	0.30	3	6.93
Ընդամենը	297	46.31	37	13.24	43	2.91	217	30.16	1414	1569.14	606	1493.46	12	4.34	350	30.79	446	40.55

Հանրապետությունում 2006թ. երրորդ եռամսյակում, 2005թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 91.8%: Ընդ որում Երևանում նվազել է 63.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 2.1 անգամ: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 36.8%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ աճել է 62.1%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ աճել է 5.8 անգամ, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 1.7 անգամ, հատուկ պահպանվող տարածքի հողերի նկատմամբ՝ աճել է 7 գործարքով և էներգետիկայի օբյեկտների հողերի նկատմամբ՝ աճել է 4 գործարքով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատավճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	111	172.40	36.8	813.1	221.0	90	80.22	362.2	6772.5	2237.9
Ապարան						42	30.77	90.6	767.6	324.8
Թալին	7	34.10	35.0	35.0	35.0	23	15.21	90.6	758.5	314.9
Ծաղկահովիտ						1	3.10	77.0	948.2	153.6
Արարատի մարզ										
Արտաշատ	33	51.74	34.8	2000.0	683.7	108	39.40	335.1	5418.0	1184.6
Մասիս	19	49.62	37.1	1071.9	362.4	62	33.91	181.1	6772.5	1559.1
Վեդի	39	53.83	20.3	2500.0	401.9	47	35.74	203.8	4515.0	972.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	13	63.39	29.3	1058.8	236.3	60	50.34	294.3	4063.5	776.1
Բաղրամյան	25	177.61	20.3	837.4	189.8	42	541.64	90.6	677.3	480.4
Վաղարշապատ	76	365.24	32.8	1411.2	451.3	98	79.99	443.7	9030.0	1305.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						4	0.99	190.2	496.7	322.6
Ճամբարակ	10	8.93	75.0	1733.3	711.3	12	5.17	45.3	541.8	137.2
Մարտունի						2	0.19	45.3	1806.0	443.9
Սևան	1	1.20	219.3	219.3	219.3	1	2.50	45.3	451.5	182.4
Վարդենիս						15	42.28	27.2	532.8	201.0
Լոռու մարզ										
Ալավերդի						103	54.19	163.0	2483.3	499.7
Գուգարք						5	6.90	226.4	2709.0	882.6
Սյիտակ						8	4.45	226.4	1490.0	485.1

Ստեփանավան	1	1.50	540.0	540.0	540.0	19	16.26	90.6	2257.5	329.1
Տաշիր						8	9.93	45.3	451.5	196.3
Կոտայքի մարզ										
Արովյան	36	83.85	15.3	817.5	171.7	145	43.91	271.7	11287.5	2904.6
Եղվարդ	91	256.87	13.3	2220.9	274.2	132	54.18	172.1	11287.5	2029.5
Հրազդան	58	58.89	90.8	4687.5	358.6	24	13.40	113.2	2709.0	720.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	32.25	498.8	498.8	498.8	12	11.37	249.0	1693.1	392.7
Ամասիա								36.2	237.0	96.9
Անի	2	3.00	85.5	85.5	85.5	8	9.94	108.7	361.2	199.3
Աշոցք						9	8.17	45.3	112.9	107.9
Արթիկ	6	2.09	175.0	888.9	355.5	2	1.69	63.4	1083.6	154.7
Սյունիքի մարզ										
Գորիս						15	32.42	90.6	673.3	304.7
Կապան	1	2.00	195.5	195.0	195.0			54.3	841.6	214.6
Մեղրի						14	2.57	181.1	1784.2	421.0
Սիսիան						10	5.35	45.3	631.2	182.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	16	61.58	37.2	341.0	166.6	10	6.17	117.7	2524.8	1214.0
Վայք	22	8.05	102.9	1850.0	323.6	4	6.49	54.3	1430.7	473.3
Տավուշի մարզ										
Բերդ						18	5.26	45.3	841.6	321.2
Իջևան	37	5.33	385.0	1601.9	471.2	11	1.49	240.0	1683.2	773.1
Նոյեմբերյան						32	10.73	45.3	3509.5	445.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2006թ. երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն և Առավելագույն Միջին			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	Նվազագույն և Առավելագույն Միջին		
			Նվազագույն	և	Միջին			Նվազագույն	և	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	50	60400.0	112.4	112.7	112.6	129	121665.0	113.2	3612.0	2057.1
Ապարան						5	12100.0	113.2	632.1	167.5
Թալին	1	1120.0	200.9	200.9	200.9	5	6276.0	45.3	361.2	74.7
Ծաղկահովիտ								45.3	361.2	67.3
Արարատի մարզ										
Արտաշատ	97	100337.0	143.0	563.0	301.9	53	64075.0	135.8	2709.0	760.0
Մասիս	7	5770.0	976.4	1000.0	983.0	109	83516.0	135.8	9030.0	971.8
Վեդի	2	2000.0	120.0	130.0	125.0	33	33439.0	113.2	993.3	554.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						24	19504.0	135.8	2257.5	913.0
Բաղրամյան								81.5	270.9	110.1
Վաղարշապատ	2	2000.0	631.0	631.0	631.0	140	121462.0	135.8	4515.0	1255.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	7	4900.0	88.6	722.9	179.2	3	3980.0	135.8	903.0	314.9
Ճամբարակ	12	12000.0	110.0	145.0	126.2	6	6793.0	45.3	135.5	79.3

Մարտունի						5	7630.0	90.6	451.5	181.8
Սևան	3	4000.0	621.0	621.0	621.0			90.6	903.0	123.1
Վարդենիս						3	2490.0	45.3	225.8	84.9
Լոռու մարզ										
Այվերդի						1	600.0	67.9	270.9	96.9
Գուգարք	2	1250.0	1104.0	1725.0	1414.5	14	10354.0	67.9	2347.8	503.3
Սյիտակ						1	770.0	63.4	451.5	103.1
Ստեփանավան	6	2108.0	74.0	276.7	226.3	7	6790.0	45.3	270.9	86.9
Տաշիր						1	3096.0	45.3	135.5	64.2
Կոտայքի մարզ										
Արուվան	57	51750.0	276.0	2337.5	2060.7	230	243713.0	135.8	6772.5	1502.7
Եղվարդ	3	3600.0	835.0	835.0	835.0	193	200220.2	135.8	6772.5	1629.5
Հրազդան	13	12710.0	147.5	1490.0	355.6	24	23840.0	135.8	9030.0	1059.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	34	11554.4	290.4	26677.4	2013.2	16	10032.2	113.2	1535.1	286.3
Ամասիա								45.3	135.5	64.2
Անի						2	1148.0	67.9	180.6	88.6
Աշոցք						1	800.0	40.8	135.5	56.8
Արթիկ	32	18052.0	42.0	1900.0	388.0	5	5050.0	67.9	925.6	128.9
Սյունիքի մարզ										
Գորիս						6	5260.0	67.9	541.8	211.1
Կապան	2	1600.0	34.0	805.0	419.5	1	300.0	67.9	632.1	193.6
Մեղրի						1	680.0	67.9	406.4	106.7
Միսիան						1	940.0	67.9	406.4	123.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	5	2000.0	682.3	691.2	689.2	7	16150.0	67.9	1128.8	229.4
Վայք						2	840.0	77.0	632.1	106.9
Տավուշի մարզ										
Բերդ								45.3	632.1	80.8
Իջևան	3	2976.0	94.7	132.1	113.4	16	13058.0	67.9	1354.5	335.1
Նոյեմբերյան								45.3	632.1	105.2

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք 0.23 հա մակերեսով /Արարատի մարզ/:

2006թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1864 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.3%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 37.1% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2005թ. երրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 30.9%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 19.9%-ով:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 153 բնակարանների, 90 անհատական բնակելի տների, 703 հասարակական, 87 արտադրական նշանակության օբյեկտների, 819 միավոր /7950.78 հա/ հողերի, 10 ավտոտնակների և 2 այգետնակների վարձակալության գործարքներ:

2006թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 33 վարձակալության գործարքների քանակը 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 69.2%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 5.7%-ով:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 7950.78 հա հողերից 5.73 հա վարձակալվել են Երևանում/։ Մյուս մարզերում վարձակալված 7945.05

հա հողերի 96.9%-ը կամ 7697.78 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության, 12.66 հա բնակավայրերի, 5.58 հա արդյունաբերական օբյեկտների, 6.55 հա էներգետիկայի օբյեկտների, 144.67 հա անտառային, 52.89 հա ընդերքօգտագործման, 5.10 հա ջրային, 19.82 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 4380.89 հա, որից 4377.94 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 4533.72 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2006թ. երրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր /	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	3	340.00	113	548.66
Արարատ	2	130.00	24	248.15
Արմավիր	1	5.00	13	66.22
Գեղարքունիք	0	0.00	61	273.98
Լոռի	4	63.00	130	242.72
Կոտայք	0	0.00	36	275.53
Շիրակ	5	175.00	172	793.83
Սյունիք	29	3675.00	36	702.94
Վայոց Ձոր	10	145.72	3	0.20
Տավուշ	0	0.00	11	11.83
Ընդամենը	54	4533.72	599	3164.06

2006թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3274 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.0%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 47.4%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 9.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /51.0%/, առանձնատների /21.2%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.4%/ և հողերի /8.2%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1700 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել է 34.4%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 11.8%-ով:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 675.59 հա մակերեսով հողեր, որից 8.55 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 96.3% կամ 650.45 հա-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 336.40 հա, որից 335.43 հա գյուղատնտեսական նշանակության:

2006թ. երրորդ եռամսյակում գրավադրման գործարքների ամսական քանակների փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 23 և 9 գործարքներ, որոնց

ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 68.0%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 74.6%-ով: 2006թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Արարատում՝ 46.9%: 2006թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների ամսեկան քանակների փոփոխման շարժն ունի աճի միտում:

2006թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 4745 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2005թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 14.0%-ով, իսկ 2006թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 14.7%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.3%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն